

ՀԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՎԱՆԻ «ՊՈՒՏ ԱՐՏԱՇԱՏ—ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ Ի ԱՐՏԱՇԱՏ—ՄԻԽԵՏԱ ՀԱ ԿԱՐՏԵ ՊԵԻՏԻՆԳԵՐԱ» ՀՈԴՎԾԻ ԱՓակ

Հայաստանի պատմական աշխարհագրության
Հարցերի լուսաբանումը կարևոր նշանակություն
ունի Հայագիտության համար։ Այդ առումով
կարևոր է Հայաստանի ճանապարհների երթու-
ղիների ուսումնասիրությունը, որ կարևոր խոր
հուրգ ունի սոցիալ-տնտեսական զարգացման
պատմության քննության գործում։ Պետինգեր-
յան կամ Կաստորիսի քարտեզի ուսումնասի-
րությամբ գրաղվել են շատերը, սակայն այն
դեռևս շատ գաղտնիքներ ունի, որոնք սպասում
են իրենց հետազոտողներ։ Այդ առումով, աս-
շուշտ, ողջունելի է Հ. Մարտիրոսյանի հիշաւ-
հոդվածի Հանդես գալը, որը լուսաբանում /
Արտաշատ—Տիգրանակերտ և Արտաշատ—Մըդ-
խեթա երթուղիները, ինչպես նաև Արտաշատ—
Տարու—Տէլէդա—Սանանուն կայարան—Լազօ-
Նարոգ—Արտաշատ շրջանաձև ուղին։ Հեղինա-
կը կատարել է նշանակալից աշխատանք, սա
կայն որոշ հարցեր կարու են հստակ փու-
տարկման, իսկ երբեմն էլ վերանաւման։

Հայոսին է, որ Արտաշատ—Տիգրանակերտ
մալրուղին է. Միլլերը անցկացնում էր Վան-
իշի հարավային ափածով, պատճառութանելով
հման երթուղին Vastauna կայարանի և Խո-
տան բնակվայրի նույնությամբ. Ռևումնասի
րողների մեջ մասը մերժել է այս երթուղին.
Հնայած եռել են Միլլերի տեսակետն ընդունա-
գիտականները. Հ. Մանանոյանը, օրինակ, գրու-
նում էր, որ Պետինդերյան բարոնից վրա կր-
կնվող Catispi, Sorue, Anteba և Nasaliv
կայարանների անունները արտագրվել են սխա-
մամբ երկու անգամ:

Հ. Մարտիրոսյանը հակված է կարծելու. ո
դրանք իրականում Սեծ Մետաքսի ճանապարհի
մէ հատվածն էին, որը ձգվում էր Էկրատո-
ւալից Արտաշատու և Նա Նասաբի-ն նովացնում և
Պաղստիռու Նախանա-ին կամ Նախճավանին,
Antchaz Ազնարիրդին, Sorue-ն Շարուրին,
իսկ Catispi-ն Ուրծածորի Մագրաբրիդին: Բո-
լորպին էլ յամենալով շատ հոկադրվել է Տեղի-
նակին, անհրաժեշտ ենք համարում նրա ուշա-
դրությունը բենեալ հետեւալ խնդիրների գր-
եթե ընդունենք, որ Nasabi-ն նախճավանն է,
իսկ Sorue-ն Շարուրը, ապա շատ տարօրինակ
պետք է լինենք ճանապարհի անցումը Ազնարը

որվ, որը ճարյուղոց դուրս էր և ճանապարհների առողմով քավականին անմատչելի կա յի հանգամանք ևս, հեղինակը համարյա թե հաշվի չի առնում կայարանների միջև եղած հեռավորությունները: Catispi-ից Sorue 27 հռոմեական մղոն է, Sorue-ից Anteba՝ 24, Anteba-ից Nasabi 24, Nasabi-ից Isumbo (հեղինակը նույնացնում է Դարաշամբի Մբ). Ստեփանոս Նախավկայի վանքին):¹⁷ Եզրած ճանապարհատվածը կազմում է 92 հռոմեական մղոն կամ շորշ 137 կմ, որն ավելի մեծ է հեղինակի մատնանշած վայրերի միջև ընկած ընդհանուր հեռավորությունից: Դրան պետք է ավելացնել նաև այն իրողությունը, որ Դարաշամբի վրայով անցնող ճանապարհը երբեք էլ աշքի չի ընկել իր կարևորությամբ: Բավականին կասկածելի է այդ պատճառով երկու աշտարակով պատկերված Isumbo-ն Շամրի կամ Դարաշամբի հետ նույնացնելու ըստ Էլության ոչնչող փաստարկված չէ Կրիտ աշտարակների գոյությունը այս կամ այն կայարանում համարել եկեղեցու առկայության արտահայտությունն Ուշադիր թնությունից պարզ կդառնա, որ երկու աշտարակներ յունեցող որոշ կայարաններ, ամենայն հավասարականությամբ, ունեցել են եկեղեցիներ, Կարծում եմ, որ Միլլերի և Մարկ-Պարտի տեսակետուն այդ հարցում առավել տրամադրանակեան է:

Բոլորովին յեն համոզում Դազնեցանա - Զարիհացան, Molchia - Ծսի, Պատանասանա - Դատվան և հ Ետագա կայարանների տեղադրությունները: Վանս լճի հարացային ափավիծը բանուկ ճանապարհների համար հարմար շրջան է, ուստի անկախ այն հանգամանքից, թե Vastan-pa-է հիշեցնում է Ոստան բաղադրի առունը, ոչ մի կերպ չի կարելի համաձայնել այն տեսակետի հետ, թե Արտաշատ - Տիգրանակերտ ճանապարհը կարող էր անցնել նշված երթուղով: Ու մի ճանապարհաշինարար հայոց երկու մայրաքաղաքները իրար չեր կազի ոպազմավարական ոչ մի նշանակություն չունեցող և անհամեմատ երկար ճանապարհով: Արտաշատ - Տիգրանակերտ ճանապարհը իրականում մեծ ուղղմանարար է անհապահ և լուրջության համար կազմակերպություն ուներ և լուրջության համար կազմակերպություն ուներ:

վին էլ ոչ պատահական կողվում էր «Արքունի պոզոտառ»:

Կայարանների տեղագրության համար կարևոր նշանակություն ունի նրանց ծայրակետային կայարանների որոշակի տեղորոշումը: Այդ առումով, եթե Արտաշատի տեղագրությանը որոշակի է, ապա Տիգրանակերտի ճշգրիտ տեղը հայտնի չէ: Նկրերու—Ֆարկին—Տիգրանակերտ նույնացըմբ, որ այսօր, ցավոք, բազարացիություն է ստացել պատմագիտության մեջ, ընդհանրապես քննադատության շի դիմանում: Տիգրանակերտը պետք է գտնվեր Ֆարկինից անհամեմատ արևելք, թեկուզ որոշակի տեղուհայտնի չէ, և բոլոր հիմքերը կան գտնելու, որ «Արքունի պողոտան» անցել է Զորապահական լեռնանցքով և Արածանի դետի ավաղանով: Առ շուշտ, ևս չեմ կամենում Հեղինակին պարտագրել ին տեղագրությունները, սակայն մի բան պարզ է, որ Տիգրանակերտը դետի արևելք տեսնելու դեպքում բոլոր կայարանների տեղագրությունը է: Այս ելակետն ունենալու դեպքում այլևս անձնաբին են Gilzana—Dizanas—Գղղղխ, Cymisa—Քղմար, Zancerio—Սանասան և այլ նույնությունները:

Հեղինակը քննության է առնում Արտաշատ—Sanora—Teleda—Անանուն կայարան—Lazo—Sarora—Արտաշատ ուղին: Հարկ է նշել, որ այս բաժնում ևս մի շարք տեղագրություններ լուրջ կասկածներ և տարակուսանք են ծնում: Կրկին թիւ են օգտագործվում միշկայարանային

հեռավորությունները: Թողորովին հավանական չեն Tegamia-ի նույնացումը Արամոնք—Արամուսին, Sarogea-ինը՝ Սոլակին, Teleda-ինը՝ Թելավին և այլն: Իհարկե, զուտ տեսականորեն կարելի է Sarala-ն նույնացնել Զելթին, Belalus-ը՝ Բոլնիսին և այլն, սակայն լավ կլիներ, որ հեղինակը փորձեր այդ ցուցալ բարտեզի վրա և տեսներ, թև որքանով է հնարավոր նման երթուղու անցկացումը: Ոչ մի հիմք չկա Lazo—Օձում նույնացման համար: Զշարունակելով այլևս մանրամասների մեջ մտնել, կարծուած եմ, որ հոդվածը կարիք ունի որոշ վերամշակման, առավել հիմնավոր փառարկման: Շատ կարևոր է, որ հեղինակը ուշադրությունը դարձնի Հայկական լեռնաշխարհի լեռնագրությանը, որը պարզապես պարտադրում է ճանապարհների ուղղությունները: Այլ խոսքով, ճանապարհների ուղղությունները վերշին մի քանի հազարամյակում գործնականում չեն փոփոխվել և լէին էլ կարող փոփոխվել: Եթե երակետ ունենանք այս ոչ գժվարին ճշմարտությունը, ապա կայարանների տեղագրությունը անհամեմատ կհեշտանա: Այսուհանդերձ, Պետինգերյան բարտեզի ճանապարհների կայարանների տեղագրությունը բնավ էլ հեշտ գործ չէ և կպահանջի շատ ուսումնասիրողների զողմից լուրջ շանքեր և ժամանակի վատնում:

Պատմ. զիտ. դոկտոր
ԲԱԹԿԾՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ